

Հայոց Հայրենիք Կուսակցության Նախընտրական Ծրագիր

ՈՒՇԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

1. Համաներման հայտարարում մինչև 2021թ-ի ավարտը, որը կտարածվի մինչև 7 տարի և Ցմահ ազատագրկման դատապարտված անձանց նկատմամբ: Կալանավորման մեկ օրը կհաշվարկվի որպես ազատագրկման երկու օր, օրենքը կունենա հետադարձ ուժ:
2. ՀՀԿ իշխանության կողմից 2011թ-ից սկսած, ատերկրում գտնվող կենսաթոշակառուներից յուրացրած թոշակների վերադարձ երեք տարվա ընթացքում:
3. Նախկին և ներկա գործող իշխանավորների թալանի ետ վերադարձ պետական բյուջե, նախկինում կոծկված քրեական գործերի վերաբացում, մեղավորների արդարացի պատժում, անարդարացի դատավճիռների և վճիռների վերանայում:
4. Բանակի բարեփոխում, բնակության վայրից 50կմ շառավղով ծառայություն, նորակոչիկներին առաջնագծից դուրս բերում, պայմանագրային պրոֆեսիոնալ բանակի կայացում, բանակի վերազինում 6-րդ սերնդի սպառազինությամբ:
5. Կոռուպցիայի կանխարգելում, ամբողջ պետական համակարգում

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐ

1. Արդյունաբերություն

- Հանքարդյունաբերության ողջ համակարգի ազգայանցում:
- Վերջնական արտադրանքի արդյունաբերական ձեռնարկությունների վերականգնում, կառուցում այդ թվում համաստեղ ձեռնարկությունների,

հանքանյութի արտահանման աստիճանային սահմանափակում: (15
ամսվա ընթացքում):

- Էներգոհամակարգի ազգայնացում, կառավարման համակարգի մոդերնիզացիա:
- Վերամշակող ձեռնարկությունների հիմնում, դրանց գործունեության խթանում, պետական պրոտեկցիա:

1. Ագրոարդյունաբերություն

ՀՀ ողջ տարածքում միջշրջանային մեքենատրակտորային կայանների վերականգնում, ստեղծում, մեքենատրակտորային պարկի ձևավորում:

- ՀՀ վարելահողերի, այգիների իրական վիճակի ուսումնասիրում-ինվենտարիզացիա:
 - Պահուստային հողերի մասնագիտական ուսումնասիրություն, նպատակային օգտագործում:
 - Հողային ֆոնդի ռեանիմացիա:
- Ըստ լանշաֆտների, բնակլիմայական պայմանների, ավանդական գյուղմթերքի հնտենսիվ արտադրության խթանում, ապրանքաիրացման համար պետական պրոտեկցիա, ճյուղի սուբսիդավորում:
- Գյուղական տնտեսության արտադրանքի մթերման սահմանափակման վերացում: Պետական միջոցների մասնակցությամբ մրգի, բանջարաբոստանային մթերքի հատուկ պահեստարանների կառուցում: Ներքին շուկան ապահովելուց զատ ողջ հավելցուկի իրացում (վերամշակում, արտահանում):

1. Ֆինանսաբանկային համակարգ

- Հայաստանի բանկային համալիրի իրական հավասար մրցակցության ապահովում, պետական աջակցություն և վերահսկողություն:

- Եվրոպական բանկային համալիրի և առանձին սուբյեկտների հետ գործընկերային համագործակցություն՝ ազատ գումարային նպատակային ներառում ՀՀ-ում:
- Եվրոպական մասնավոր և կորպորատիվ կենսաթոշակային հիմնադրամների Հայաստան մուտքի ապահովում՝ անհրաժեշտ օրենսդրական դաշտի ստեղծում:
 - Մեզ մոտ նրանց գործունեության խրախուսում:

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՆՈՒՄՆԵՐ

Մեկ տարվա ընթացքում.

1. Կազմակերպել մարդահամար:
2. Նվազագույն զամբյուղը հասցնել 150.000 հի դրամ (նվազագույն զամբյուղը պետք է ապահովի քաղաքացու անհրաժեշտ ծախսերը ամսվա կտրվածքով):

Նվազագույն զամբյուղի գումարի չափը հարկման ենթակա չէ:
 Նվազագույն աշխատավարձը պետք է լինի նվազագույն զամբյուղից 30-40% ավելի: Նվազագույն զամբյուղը պետք է ուղիղ համեմատական լինի թոշակին:
3. Պատերազմում հաշմված ժամկետային, պայմանագրային և պրոֆեսիոնալ զինծառայողներին տրամադրել ցմահ պատվովձար (նպաստ, թոշակ) նվազագույն աշխատավարձի 1,5 անգամ ավել:

1-ին և 2-րդ կարգի հաշմանդամներին տրամադրել նաև խնամողի վճար նվազագույն աշխատավարձից ոչ պակաս:

Ապահովել հաշմանդամին և նրա խնամակալին տարեկան երկու անգամ ամառային – ձմեռային հանգիստ ՀՀ առողջարաններում:
4. Կանանց համար ծերության կենսաթոշակային ժամկետ սահմանել 55 տարին:

Կնոջ դեկրետային ժամկետը համարել աշխատանքային ստաժ՝ 1 օրը հավասար 2 օր ինդեքսով:

Դեկրետային ինդեքս սահմանել չաշխատող մայրերի համար ամսեկան նվազագույն զամբյուղի եռապատիկի չափով (վճարումը կատարել պետբյուջեից):

Աշխատող մայրերի համար ստացվելիք ամսեկան վճարը շարունակել գործող օրենքով, բայց ոչ սակավ նվազագույն զամբյուղի եռապատիկի չափով: Պակասող գումարը կվճարեն պետական բյուջեից:

5. Հաստատվելու է քվոտա հաշմանդամ ունեցող ընտանիքների համար՝

- . անվճար 200 կվ էներգիա ամսեկան

- . 10 խմ գազ գարուն-ամառ

- . 25 խմ գազ աշուն-ձմեռ

բարձրադիր լեռնային շրջաններում 1,5 անգամ ավել:

Վճարումները կկատարվեն ՀՀ պետբյուջեից:

Սույն արտոնությունները բացի խնամողի վճարից կպահպանվի հաշմանդամի կնոջ համար ցմահ և երեխաների մինչև 21 տարին լրանալը:

Երկրի տարածքում հաշմանդամի և խնամողի երթևեկության (բացի տաքսի) վճարը կվերադարձվի նրանց ներկայացված կտրոնների – տոմսակների առկայության պարագայում:

Տարեկան յուրաքանչյուր հաշմանդամի տրամադրել հավելյալ վճար մինչ 500 կմ տաքսով երթևեկելու համար:

Ըստ որի՝

- . Կկառուցվեն նոր մանկապարտեզներ, կամ մանկապարտեզների նոր մասնաշենքեր նախադպրոցական զբաղվածությունը ապահովելու համար:

- . Անապահով ընտանիքների, հաշմանդամ ունեցող ընտանիքների համար մանկապարտեզները կլինեն 100% անվճար:

- . Հատուկ ուշադրություն դարձնել միայնակ մայրերի ապահովածությանը: Միայնակ մայրերի երեխաների վրա տարածել պատերազմում հաշմված անձ ունեցող ընտանիքների բոլոր իրավունքները:

1. Երկրում կիրառել միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթության Եվրոպական համակարգը՝ այն է ուսանողի հետ կնքել համագործակցության պայմանագիր, ըստ որի ՀՀ-ն հանձին կրթության-գիտության նախարարության, ուսանողին կտրամադրի անտոկոս վարկ ուսման վարձի և կրթաթոշակի համար, (կրթաթոշակ ոչ պակաս քան նվազագույն աշխատավարձի 100.000 ապատիկի չափով) :

Դրա փոխարեն ուսանողը պարտավոր է մասնագիտական կրթություն ստանալով աշխատանքի անցնելու պարագայում 30 տարվա ընթացքում վճարել ստացած ողջ գումարը: Անհրաժեշտ է նշել, որ մասնագետը պարտավորվում է աշխատել ՀՀ-ում, կամ արտերկրում համաձայնեցնելով ՀՀ լիազոր մարմնի հետ (տվյալ պարագայում կրթության-գիտության նախարարություն):

1. Իրականացնելով լայնամաշտաբ աշխատանքներ ՀՀ կառավարությունը կձեռնարկի սոցիալական բնակարանաշինության հատուկ քաղաքականություն, որից 15%-ը մայրաքաղաքում մնացածը մարզերում: Կհայտարարվի միջազգային տենդեր: Ֆինանսավորման 60%-ը կիրականացնի պետությունը 40%-ը միջազգային կառույցները: (օրենքի նախագիծը պատրաստ է):

1. Առանձնահատուկ վերաբերմունքի արժանացնել մանկատներն ու ծերատները: Դրա համար ուղիղ կապի մեջ մտնել արևմտյան Եվրոպայի համապատասխան կառույցների հետ՝ ոչ միայն ուսումնասիրելու համար նրանց բազմափորձ գործունեությունը, այլև այն կիրառել Հայաստանում, ընդունելով նրանց ուղղակի աջակցությունը:

1. Հայաստանի բոլոր սահմանամերձ բնակավայրերը հայտարարել սահմանապահ գոտի: Օրենքով սահմանել նրանց տրվելիք

արտոնություններն ու պարտականությունները:

ՉՍՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐ

Սահմանադրական փոփոխությունների արդյունքում ՀՀ կառավարման կարգը դառնում է նախագահական

1. Լուծարվում են ԲԴԽ-ն, Սահմանադրական, վերաքննիչ և վճռաբեկ դատարանները, ստեղծվում է գերագույն դատարան իր պալատներով՝ քրեական, քաղաքացիական, վարչական, սնանկության: Նոր դատարանակազմության ժամանակ իրականացվում է դատավորների վերթինգ, ինչպիսիք միջոցներով ավելացվում է դատավորների քանակը և աշխատավարձերը:

2. Կառավարության ուռճացված հաստիքների, ծառայողական ավտոմեքենաների և պարզևավճարների կրճատման արդյունքում, արդիականացնել իրավապահ համակարգը, բարձրացնել Ոստիկանության, քննչական մարմինների և դատախազության աշխատակիցների աշխատավարձերը:

3. Բանակը դարձնել հիմնականում պայմանագրային բարձր աշխատավարձով, 18 տարեկան նորակոչիկներին դուրս բերել առաջին գծի ծառայությունից: Բյուջեի հիմնական միջոցների գերակշիռ մասը ուղղել բանակի արդիականացմանը և սպառազինությանը:

ԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐ

Կրթական ոլորտի բարեփոխումներ

Կրթական ոլորտի հիմնախնդիրները և դրանց լուծումը կուսակցության ծրագրի առաջնահերթություններից է: Այն վեր ափոխումները, որոնք կատարվել են ՀՀ իշխանությունների կողմից, ուղղված են եղել ոչ թե կրթության ազգային համակարգի ստեղծմանը, այլ կազմաքանդմանը՝

Հայաստանը վերածելով կրթական խոտան վերածող երկրի: Հատկապես վերջին երկու տարիներին իշխանությունների կրթական քաղաքականությունը ամբողջովին ուղղված է եղել կրթական համակարգի ապագգայնացմանը և արևմտականացմանը (վեստերնիզացմանը): Այդ մասին են վկայում նոր չափորոշման և առարկայական ծրագրերի նախագծերում հայ գրականության, հայոց պատմության և Հայ եկեղեցու պատմության տեղի և դերի, անվանումների հետ կապված հանրային բողոքի ալիքը:

Ելնելով ստեղծված իրավիճակից՝ կուսակցությունը գտնում է, որ՝

1. Պետք է մշակել ազգային կրթության պետական հայոցակարգ, որի հիմքում պետք է դրվի հայ ժողովրդի ազգային անվտանգության գաղափարի շուրջ:

2. Լիարժեք կրթական դաշտ և հավասար պայմաններ ստեղծելու նպատակով պետք է հրաժարվել ավագ դպրոցի հոսքային ուսուցումից: Հոսքային ուսուցման իրականացնող բոլոր ավագ դպրոցները պետք է վերածվեն ընդհանուր միջնակարգ դպրոցների:

3. Պետք է հրաժարվել շատ դեպքերում ձևական բնույթ կրող և չարաժահումների տեղիք տվող ուսուցիչների ընտրության գործող կարգից: Ուսուցիչների ընտրությունը կատարել ոչ թե գրավոր աշխատանքի արդյունքով, այլ փաստաթղթային տարբերակով, այսինքն փաստաթղթերի հիման վրա՝ առաջնությունը տալով կրթական ցենզին և փորձառությանը:

4. Պետք է լուծել ուսուցիչների սոցիալական խնդիրները: Իր սաներին օրինակ ծառայող ուսուցիչը պետք է ունենա արժանապատիվ սոցիալական կարգավիճակ և շատ բարձր աշխատավարձ:

5. Լուծման կարիք ունեն երեխաներին 1-ին դասարան ընդունելու կարգի ներառական կրթության, գնահատման համակարգի, դպրոցի տնօրենի ընտրության, դպրոցի ֆինանսավորման հետ կապված հարցերը:

ԵՐՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳԻՐ

1. Կրթական համակարգ

Ընդունել Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության մասին օրենք, ըստ որի ՀՀ-ը երաշխավորում է ուսանողի կրթության վճարի անտոկոս վարկավորումը: Սույն օրենքով կսահմանվի ուսանողի

կրթաթոշակի և կենցաղային ծախսերի ապահովումը: Օրենքի նախագիծը պատրաստ է:

1. Բիզնես

Խրախուսել երիտասարդ գործարարների գործունեությունը, իրականացնել պետական պրոտեկցիա՝

- հարկային զեղճեր
- վարկային տոկոսադրույքների զեղճեր
- ներկրում – արտահանում – մաքսատուրքերի զեղչեր՝ օրենքի նախագիծը պատրաստ է:

1. ՄՊՈՐՏ

- Երկրում իրականացնել բոլոր անհրաժեշտ միջոցառումները սպորտը ինդուստրիայի ռելսերի վրա դնելու և պրոֆեսիոնալ սպորտը արմատավորելու համար: Ապահովել սպորտային սերնդափոխությունը՝ մանկական, երիտասարդական, սպորտային, ռեզերվի ստեղծում:
- Ֆինանսավորումն ամբողջովին կիրականացվի պետական բյուջեի հաշվին:
- Սպորտի հովանավորները կխրախուսվեն պետության կողմից՝ հարկային զեղչեր և այլն: Օրենքի նախագիծը պատրաստ է:

1. Մշակույթ

ՀՀ Կառավարության ուշադրության կենտրոնում են գտնվելու պատանի և երիտասարդ ստեղծագործողները: Պետական աջակցությամբ կմիջազգայնացվեն նրանց ստեղծագործությունները, կֆինանսավորվեն երիտասարդ կատարողների արտասահմանյան հյուրախաղերը, կխրախուսվեն անձնապես: Օրենքի նախագիծը պատրաստ է:

1. Երիտասարդ ընտանիքներ

Ծնելիության խրախուսում, բնակարանային և կենցաղային խնդիրների լուծման աջակցություն: Օրենքի նախագիծը պատրաստ է:

ԱՌՈՂՋԱԿԱԶՈՒԹՅԱՆ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՂՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Առողջապահական ոլորտը հատկապես վերջին տարիների ընթացքում կտրուկ հետընթաց ապրեց: Հանրության վստահությունն այս համակարգի գործունեության նկատմամբ խիստ նվազեց՝ պայմանավորված գաղտնի հրամանների արձակմամբ, որոնցում փորձագետների կողմից արձանագրվեցին իրավախախտումներ, ինչպես նաև՝ միջազգային կառույցներից ստացվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում համընդհանուր կլինիկական փորձարկումների թվի կտրուկ ավելացմամբ: Այսօր, առողջապահական համակարգը, մեր պետության գործունեության մյուս ոլորտների հետ մեկտեղ, առողջացման կարիք ունի:
Առողջապահական ոլորտի առողջացման հիմնախնդիրներն են.

- Հայաստանի Հանրապետության առողջապահական համակարգի զարգացման և կայացման առաջին նախապայմանն այս ոլորտում իրավահավասարության հաստատումն է: Առողջապահական համակարգի զարգացման համար առաջին հերթին համակարգի պատասխանատուներին և նրանց ընտանիքի անդամներին պետք է արգելվի հետազոտվել և բուժում ստանալ արտերկրում: Միայն այս պարագայում համակարգի պատասխանատուները կձեռնարկեն բոլոր միջոցները՝ Հայաստանում առողջապահությունը զարգացած ու հասանելի դարձնելու համար:

- Հաշվի առնելով վերջին տարիների իրադարձությունները՝ առողջապահական ոլորտում հույժ կարևոր է ապօրինի կլինիկական փորձարկումներն արգելող օրենսդրական դաշտի ստեղծումը: ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի պետք է տեղյակ լինի Հայաստանում իրականացվող կլինիկական փորձարկումների բնույթի ու նպատակի մասին: Պետք է բացառվեն դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող ապօրինի կլինիկական փորձարկումները:

- Հայաստանի Հանրապետություն ներմուծված բոլոր դեղամիջոցները և պատվաստանյութերը պետք է ենթարկվեն մանրամասն փորձաքննության:
Պետք է արգելվի կեղծ դեղամիջոցների մուտքը Հայաստան:

- Հայաստանի Հանրապետությունում պետք է հիմնադրվի հայկական պատվաստանյութերի արտադրության գործարան, ինչի արդյունքում կգարգանա գիտությունը, կկանգնի գիտնականների արտագաղթը, քաղաքացին վստահ կլինի պատվաստանյութի որակի ու անվտանգության վրա: Այսպիսով կվերականգնի քաղաքացու երբեմնի վստահությունը առողջապահական համակարգի նկատմամբ:

- Օրենսդրությամբ պետք է սահմանվի, որ պատվաստանյութերի կիրառումը պետք է լինի ԿԱՄԱՎՈՐ:

- Ողջ աշխարհը պատած կորոնավիրուսային համավարակը Հայաստանում տարավ ավելի քան 5.000 քաղաքացու կյանք: Պետք է վերանայվեն կորոնավիրուսային հիվանդության բուժման բոլոր ուղեցույցերը, կազմակերպվեն այս հիվանդության արդյունքում մահացած անձանց դիախերձումներ, հիվանդության առաջացրած խնդիրների բացահայտում, բուժման արդյունավետ միջոցների մշակում և ներդրում՝ անհետաձգելի ռեժիմով:

- Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր չափերի է հասնում անպտղությունը՝ երկու սեռի մոտ: Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ՝ անպտղության պատճառները պարզելու համար: Կարևոր է շեշտը դնել անպտղության կանխարգելման ու բուժման ծրագրերի իրականացման վրա: Այս ծրագրերը արագացված կարգով

չիրականացնելու պարագայում Հայաստանն ունենալու է լրջագույն
դեմոգրաֆիկ խնդիր:

- Ուռուցքային հիվանդությունների տարածվածությամբ ՀՀ-ն զբաղեցնում է առաջին հորիզոնականները ողջ աշխարհում: Ուռուցքների պատճառները բազմաթիվ են և դրանք բոլորն առկա են մեր հայրենիքում: Առաջին հերթին անհրաժեշտ է վերացնել ուռուցք-առաջացնող բոլոր պատճառները՝ բարձր ճառագայթային ֆոնը, անորակ ու կասկածելի սնունդը, վնասակար սովորությունների տարածվածությունը, սննդի, ջրի, օդի և հողի աղտոտվածությունը, սթրեսը և այլն: Ուռուցքով տառապող հիվանդների բուժումը պետք է շարունակի մնալ պետության լիակատար հոգածության ներքո:

Հայաստանի Հանրապետությունում մինչ օրս չբուժվող բոլոր տեսակի ուռուցքային հիվանդություններով հիվանդները ոչ թե պետք է ուղղորդվեն արտերկիր, այլ պետք է կազմակերպվի տեղում նրանց բուժումը՝ այդ թվում նաև Սփյուռքում բնակվող հայ մասնագետների կամ օտարազգի մասնագետների կողմից:

Պետության հոգածության ներքո պետք է լինի հատկապես մանկական ուռուցքաբանության ոլորտը:

- Հայաստանում չպետք է լինի գեթ մեկ հիվանդություն, որի բուժման եղանակները առկա են արտերկրում, սակայն՝ ոչ Հայաստանում: Այն բոլոր հիվանդությունները, որոնք հնարավոր է բուժել աշխարհի որևէ ծայրում, պետք է հասանելի լինեն ՀՀ քաղաքացիների համար:
- Հեռուստատեսությամբ հեռարձակվող ծրագրերը, համացանցում առկա հաղորդումները, համակարգչային և ազարտային խաղերը բացասական ազդեցություն են թողնում մեր հանրության հոգեկան առողջության վրա՝ կտրուկ բարձրացնելով հոգեկան հիվանդությունների,

կախվածությունների թիվը: Հոգեկան առողջության ոլորտի դեմ պայքարը պետք է տարվի ոչ թե մարդկանց հոգեմետ դեղամիջոցների ազդեցության տակ պահելով, այլ վերացնելով հոգեկան խանգարումներ առաջացնող բոլոր պատճառները:

- Մեր տարեցները մեր հարստությունն են: Նրանց առողջությունը և երկարակեցությունը պետք է լինեն պետության հոգածության ներքո: Տարեցները ոչ թե պետք է հերթի կանգնեն պոլիկլինիկաներում այլ ճամփորդեն Հայաստանի ողջ տարածով՝ վայելելով իրենց ծերությունը: Նախկինում նախատեսված բոլոր սքրինինգային ծրագրերը պետք է կյանքի կոչվեն, իսկ չկատարված ծրագրերի հարցերով պետք է զբաղվեն հակակոռուպցիոն մարմինները:

- Սեփական առողջությանը պատշաճ վերաբերվելու համար քաղաքացիները պետք է ստանան համապատասխան կրթություն՝ սկսած մանկապարտեզից: Մանկապարտեզներում երեխաներին պետք է տալ մարդու մարմնի կառուցվածքի և գործունեության մասին պարզունակ գիտելիքներ: Գործընթացը պետք է շարունակել նաև դպրոցներում, այնպես, որ դպրոցն ավարտելուց պատանիներն իմանան անգամ առաջին բուժօգնության ցուցաբերման կանոնները, պատվաստանյութերի ազդեցության մեխանիզմները, դեղորայքի չարաշահման բարդությունները, վնասակար սովորությունների վտանգավոր ազդեցությունները և բժշկին ժամանակին դիմելու առավելությունը: Առողջության պահպանման և վերականգնման մասին գիտելիքներ պետք է տրվեն նաև բոլոր ոչմասնագիտական ԲՈՒՀ-երում:

- Երկրորդային չպետք է լինի բուժաշխատողների աշխատանքով ապահովման հարցը: Յուրաքանչյուր ուսանող, կախված իր առաջադիմությունից, պետք է ունենա հնարավորություն՝ ընտրելու իր աշխատավայրը, որը կպարտավորվի տրամադրել պետությունը: Ի սպաս

պետք է վերացվի կաշառք վերցնելու միջոցով աշխատանքի տեղավորման հարցը:

- Անհրաժեշտ է իրականացնել առողջապահական համակարգի համաչափ զարգացում ՀՀ ողջ տարածքում: ՀՀ մարզերում աշխատող բժիշկներին պետք է վարձատրել շուրջ 30%-ով ավելի, քան մայրաքաղաքում, նրանց տալ մի շարք արտոնություններ՝ դեպի մարզեր բժշկական կադրերի հոսք ապահովելու համար:
- Մինչ օրս չկա բուժաշխատողների իրավունքների պաշտպանությանն ուղղված որևէ լուրջ փաստաթուղթ: Բուժաշխատողները դարձել են խոցելի խումբ՝ իրավական պաշտպանվածության առումով: Նրանք, հաճախ են ենթարկվում ֆիզիկական և հոգեբանական հարձակումների:
Բուժաշխատողների ուսերին դրված են հսկայական պատասխանատվություն, իրենց ուղղակի աշխատանքի հետ կապ չունեցող գործառույթներ, չարաշահվում է նրանց աշխատանքը, կատարվում են աշխատավարձերի թերի վճարումներ, ուշացումներ: Այս և բազում այլ պատճառներ խթան են հանդիսանում բուժաշխատողների արտագաղթի, բժշկի մասնագիտության նկատմամբ հարգանքի բացակայության և բժիշկների՝ էլիտար խավից դուրս մղման համար:
- Համընդհանուր ապահովագրական համակարգի ներդրման մասին խոսել են բոլորը, սակայն չեն ձեռնարկվել գործուն քայլեր: Ինչպես ցանկացած աշխատանք, այնպես էլ բժշկական աշխատանքը պետք է վարձատրվի: Այս հարցի լուծման համար անհրաժեշտ է ներդնել համատարած ապահովագրական համակարգ:
- Պետք է սահմանվի խիստ վերահսկողություն պետական բյուջեի միջոցների ծախսի նկատմամբ: Բացառվելու են անհիմն ծախսերը, պետական միջոցները մսխումը, անհիմն գործուղումները, պաշգևավճարները: Բյուջեի գումարները մեծամասամբ ուղղվելու են ՀՀ-ում

առողջապահական համակարգի հիմնավորված մոդեռնիզացիայի և բժշկական կադրերի կատարելագործման ուղղությամբ:

- Առողջապահական ոլորտը չպետք է անմասն մնա համաշխարհային առաջընթացից: Հետևաբար այստեղ նույնպես պետք է ներդրվեն նորագույն բժշկական տեխնիկա ու տեխնոլոգիաներ: Մա կկանխի բուժանձնակազմի և հիվանդների արտահոսքը ՀՀ-ից, կխթանի բժշկական տուրիզմը և Հայաստանի տնտեսական զարգացումը: Առողջարանային ոլորտի զարգացումը ՀՀ տնտեսական վիճակի բարելավման կարևոր ուղղություն է:
- Լրջագույն ուշադրություն պետք է դարձնել բժշկական էթիկայի նորմերի պահպանմանը: Հսկողության առարկա պետք է լինեն ինչպես բուժաշխատող-այցելու, այնպես էլ բուժաշխատողների միջև փոխհարաբերությունները: Պետք է առաջնահերթություն տրվի սահմանադրական այն նորմին, ըստ որի յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի ստանալու մասնագիտական օգնություն, հարգալից վերաբերմունք բուժանձնակազմի կողմից: Պետք է վարչական տույժի ենթարկվեն բոլոր այն բուժաշխատողները (անկախ իրենց գրաված պաշտոնից), ովքեր կչարաշահեն իրենց պաշտոնական դիրքը՝ անցնելով անձնական վիրավորանքների, ճնշումների:
- Ուսումնասիրվելու են առողջապահական համակարգի բյուջեի ծախսի ուղղությունները և դրանց տրվելու է անաչառ, բազմակողմանի, հիմնավորված և վերջնական գնահատական: Բյուջեից ցանկացած քանակի գողությունը, մսխումը յուրացումը պատժվելու է օրենքի ողջ խստությամբ:
 - Հայաստանն աստիճանաբար անցում է կատարում դեպի ծերացող երկրների շարք:
- Ինտենսիվ արտագաղթը (հատկապես երիտասարդների), ծնելիության նվազումը, մահացածության կտրուկ ավելացումը (այդ թվում Արցախյան վերջին պատերազմով ու COVID-19-ով պայմանավորված)՝ Հայաստանը կանգնեցրել է ժողովրդագրական աղետի առաջ:

•

- Այս խնդրի լուծումը պահանջում է անհապաղ միջոցառումների շարք.
-
- Սոցիալական պայմանների բարելավում, որը կրերի արտագաղթի նվազեցման, ամուսնությունների թվի աճի:
- Անպտղության դեմ պայքարի ծրագրերի իրականացում` շեշտը դնել անպտղություն առաջացնող պատճառների վերացման և վերարտադրողական ֆունկցիան հնարավորինս վերականգնելու վրա: Հետևանքը` ծնելության ցուցանիշի բարձրացում:
- Ճանապարհատրանսպորտային պատահարների պատճառների ուսումնասիրում, նվազեցում և վերացում:
-
- Տարեցների շրջանում առողջապահական սրբինինգային ծրագրերի իրականացում, հիվանդությունների կանխարգելում,վաղ հայտնաբերում և բուժում:
- Պետական ծրագրերի միջոցով հատկապես հայկական ընտանիքների ստեղծման խթանում:
 - ՀՀ սահմանամերձ գյուղերում աշխատատեղերի ստեղծում,երիտասարդության ժամանցային վայրերի կազմակերպում, կեցության մակարդակի ու հնարավորությունների կտրուկ բարձրացում` ծնելիության խրախուսում պետության կողմից: Սահմանամերձ բնակավայրերին սահմանապահ բնակավայրի կարգավիճակ:

- ՀՀ սահմանների անվտանգության և խաղաղության լիակատար ապահովում:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԻ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐ

Անվտանգության ոլորտի մաս են կազմում առողջապահական-դեպոզիտային, ռազմական, տնտեսական, ֆինանսական, կրթական, սննդային, ջրային, բնապահպանական ոլորտները:

1. Վերականգնել և զարգացնել գերժամանակակից ռազմարդյունաբերությունը՝ օգտագործելով հայ և հրավիրված գիտնականների հայտնագործությունները:

Նորագույն զինատեսակների արտադրությունը Հայաստանը կդարձնի առաջատար՝ աշխարհի մակարդակով: Կստեղծենք տարածաշրջանի ամենազարգացած և արդիական ռազմարդյունաբերական համալիրը, որը կապահովի մեր բանակի պահանջները՝ ժամանակակից խելացի՝ զինատեսակներով, կարտահանի դրանք՝ ապահովելով այդ ոլորտի շարունակական զարգացումը, Հայաստանի տնտեսական հզորացումը և անվտանգությունը: Սույնով սահմանների անվտանգության ապահովման հարցում կնվազեցվի մարդու ներկայությունը՝ կտրուկ ավելացնելով տեխնիկական ապահովման միջոցները:

1. Զորքը կապահովի գերժամանակակից պաշտպանողական և հարձակվողական զինատեսակներով, զինամթերքով, զինվորական հագուստով, հատուկ սարքավորումներով:

2. Հինգ տարվա ընթացքում կստեղծենք պրոֆեսիոնալ բանակ: Զինվորական ծառայությունը կդարձնենք ցանկալի, պատվաբեր, բարձր վարձատրվող:

3. Բանակը յուրաքանչյուր տարի կհամալրվի արհեստավարժ, ՀՀ-ում և արտերկրում ուսանած, մասնագիտական պատրաստվածություն անցած սպայական կազմով՝ պարբերականորեն իրականացնելով բնական սերնդափոխություն:

4. Կհզորացվեն հետախուզության և հակահետախուզության ոլորտները, որոնց հիմնական խնդիրը կլինի հավաքագրել տեղեկատվություն իրական կամ պայմանական թշնամու ռազմական ռեսուրսների, մարտական

գործողությունների, խոցելիության, պլանների մշակման, իրական և հավանական մարտական գործողությունների վայրի մասին:

5. Կզսպենք այլ պետությունների և հակապետական՝ ծայրահեղական ու ահաբեկչական կազմակերպությունների, օտարերկրյա գործակալական մարմինների հետախուզական գործունեությունը:

6. Կվերապատրաստվեն սահմանապահ զորքերը, բարձրացնելով մարտունակության մակարդակը (ՀՀ և արտերկրի պրոֆեսիոնալների կողմից):

7. Դպրոցների բարձր դասարաններում, որպես հիմնական առարկա կներդրվի զինվորական կրթություն՝ խթանելով Ազգ-Բանակ հայեցակարգի կայացումը:

Պետության ռազմական անվտանգության ապահովման ամենակարևոր արտաքին գործոններն են.

1. Քաղաքական-դիվանագիտական ճանապարհով՝ ռազմական սպառնալիքի նվազեցում (վերացում):
2. Հավանական հակառակորդների թվի նվազեցում, նոր դաշնակիցների ձեռքբերում:
3. Ռազմական բախումները կանխելու և տեղայնացնելու միջոցառումների համակարգի մշակում և իրականացում:
4. Հարևան և բարեկամ պետությունների հետ համագործակցություն (հակաահաբեկչական գործողությունների շրջանակ):
5. Պաշտպանական ռազմաքաղաքական դաշինքներին և կառույցներին ՀՀ մասնակցության ու անդամակցության ընդլայնում՝ հնարավոր ազդեցիկան հավաքական կամ միասնական ուժերով հետ մղելու համար:

Անվտանգության տնտեսական բաղադրիչ.

1. ՀՀ-ում վերականգնվելու է վարելահողային ֆոնդը: Անցում է կատարվելու ինտենսիվ ագրոարդյունաբերության:

1. Օտարերկրյա ներդրումների և պետական պրոտեկցիոն քաղաքականության արդյունքում օգտագործելով թեթև և ծանր արդյունաբերության Հայաստանյան ներուժը, Հայաստանը կվերականգնի իր երբեմնի բարձորակ, զարգացած, ժամանակակից արդյունաբերություն ունեցող երկրի համբավը:

2. Ներմուծող երկրից կդարնանք արտահանող երկիր՝ օգտագործելով Եվրասիական տնտեսական համագործակցության մեր անդամակցության փաստը, Իրանի Իսլամական Հանրապետության, Վրաստանի Հանրապետության երկկողմ բարիդրացիական հարաբերությունները, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության, Հնդկաստանի Հանրապետության հետ բարեկամական և փոխշահավետ համագործակցության հնավարությունները, Եվրոմիության հետ կնքած համապարփակ և ընդլայնված գործընկերության մասին կնքած և վավերացված համաձայնագիրը (18.04.2018թ):

Անվտանգության ֆինանսական բաղադրիչ.

1. Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովը՝ կառավարության ներկայացմամբ կնդունի օրենսդրական փաթեթ, օտարերկրյա կապիտալի մուտքը Հայաստանում գրավիչ և ապահովված դարձնելու ուղղությամբ:

2. Ուսումնասիրելով Շվեյցարիայի փորձը ֆինանսաբանկային համակարգի կայուն գործունեության և խրախուսիչ քաղաքականության ուղղությամբ, Հայաստանը մեկից երեք տարվա ընդացքում կդարձնենք տարածաշրջանի կենտրոն Ասիա մայրցամաք՝

3. Հնարավորություն կստեղծենք պատմական փորձառություն ունեցող կենսաթոշակային հիմնադրամների մուտքի ապահովվումը Հայաստանի Հանրապետություն:

4. Մինչույն ժամանակ օգտագործելով նաև վերոնշյալ կառույցների առկայությունը, միջազգային նորմերի և օրենքների շրջանակներում կվերահսկվեն` ՀՀ-ում շրջանառվող, ՀՀ մուտք գործող և ՀՀ-ից դուրս եկող բոլոր ֆինանսական հոսքերը, որոնցով կանխվելու է ՀՀ-ում հակապետական գործունեության համար տրամադրվող ֆինանսական միջոցների շրջանառությունը:

Առողջապահական անվտանգության բաղադրիչ.

1. Կձեռնարկվեն դեմոգրաֆիկ ցուցանիշների բարելավմանն ուղղված տարաբնույթ միջոցառումներ (ընդունվելիք օրենքներ, ծնելիության խրախուսում, պետական հովանավորչություն) օրենքի նախագիծը պատրաստ է:

2. կվերահսկվեն օտարերկրյա բիոլաբորատորիաների գործունեությունները, առերևույթ սպառնալիքի դեպում դրանք կփակվեն

կամ կազգայնացվեն :

3. Կբացառվեն ապօրինի կլինիկական փորձարկումները:

Կրթական անվտանգության բաղադրիչ.

1. Կվերանայվեն և հարկ եղած դեպքում չեղարկվեն բոլոր ապագային և հակապետական փաստաթղթերը, որոնք հակասում են Հայաստանի ազգային շահին:

Սննդային անվտանգության բաղադրիչ.

1. Կընդլայնվեն սննդային անվտանգության տեսչական մարմնի լիազորությունները : Կարգելվեն վտանգավոր նյութեր, գենային ինժեներիայի միջոցով ստացված բաղադրիչներ պարունակող սննդամթերքի ներմուծումը, արտադրությունը և իրացումը ՀՀ տարածքում:

Ջրային անվտանգության բաղադրիչ.

1. Ջրային ռեսուրսների ճիշտ կառավարում,ինտեսնիվ ջրօգտագործում:

2. Կգործարկվի Որոտան-Արփա ջրատարը:

1. Կառավարությունը կմշակի նոր՝ փոքր ու միջին ջրատարողությամբ ջրամբարների կառուցման ծրագիր՝ ապահովելով թե ոռոգման գործընթացն ամբողջովին, թե փոքր ու միջին հիդրոէլեկտրակայանների գործարկումը:

1. Խստագույնս կպահպանվի ջրի որակը:

1. ԱԺ-ն կընդունի համապատասխան օրենք, որն օրենսդրական հիմք կհանդիսանա Տրանսմայրցամաքային ջրատարի կառուցման համար ինչի միջոցով ՀՀ ջրային հավեցուկի մեծ մասը կառագվի Մերձավոր Արևելյան 22 երկրներ (այդ երկրների առաջարկություններն առկա են):

1. Հայաստանը կդառնա ջուր արտահանող կարևոր երկիր:

Բնապահպանական անվտանգության բաղադրիչ.

1. Անտառային տարածքների վերականգնում, ընդլայնում:

2. Գործարկվող հանքերի բնապահպանական պատասվորությունների խստագույն վերահսկողություն:

3. Պոչամբարների գտում, դրանց օգտագործելի հողատարածքների վերածում:

4. Կենդանական աշխարհի կենսաբազմազանության ապահովում:

5. Կուրորտային համալիրի կառուցում, կուրորտային և բիոտուրիզմի զարգացում:

ԲԱՆԿԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐ

Նախատեսվում են բարեփոխումներ իրականացնել ոչ միայն բանկային ծառայությունների ոլորտում, այլ նաև ողջ բանկային համակարգում՝ մասնավորապես բանկերի օպտիմալացում, ՀՀ Ֆինանսական շուկա ազգային բանկի ներդրում, վարկավորման մեխանիզմների բարելավում և մասնավոր բանկերի գերշահույթի հետապնդման կասեցում:

1. Բանկերի օպտիմալացում

Ներկայումս ՀՀ-ում գործում են տասնյակ բանկեր և վարկային կազմակերպություններ, որոնք տրամադրում են բանկային ծառայություններ՝ ապահովելով սեփականատերերին գերշահույթ՝ բանկային ծառայությունների և տրամադրվող վարկերի միջնորդավճարներից և տոկոսագումարներից:

Հայտնի է, որ 2018 թվականին ՀՀ Կենտրոնական բանկը հայտարարեց սպառողական վարկերի տարեկան փաստացի տոկոսադրույքների 24%-ը չգերազանցող օրինագծի ներդրման մասին, սակայն այս օրինագիծը շրջանցեց ՀՀ-ում գործող Վարկային Կազմակերպություններին, ինչի արդյունքում կենտրոնական բանկի անհետևողականության և կոռումպացվածության պատճառով, բանկերն ու վարկային կազմակերպությունները բարձրացրին վարկերի միջնորդավճարները և սպասարկման վճարները՝ կրկին ապահովելով սեփականատերերի գերշահույթները:

ՀՀ բնակչության քանակի համեմատ, բանկերն ու վարկային կազմակերպությունները շատ են, ենթադրվում է, որ նման մեծ քանակը պետք է ապահովեր ոլորտի մրցունակությունը, որից պետք է շահեր սպառողը, սակայն ՀՀ ում՝ հակառակն է:

Օրեցօր շատանում են ժամկետանց և խնդրահարույց վարկերի քանակը, ինչը նաև հետևանք է վարկավորման մեխանիզմների, ոլորտին վերաբերվող օրինագծերի թերացման, ուստի տվյալ նախագծում առաջարկվում է կրճատել գործող կազմակերպությունների քանակը, ոլորտին վերաբերվող օրինագծերի վերանայման և փոփոխման և վերստեղծել վարկավորման նոր մեխանիզմներ, ակտիվների նոր դոնորներ և այս ամենի գործարկման արդյունքում կբարելավվի ծառայությունների մատուցման որակը, մատչելիությունը և կձևավորվի նոր և գերիզուր բանկային համակարգ և կլուծվեն ՀՀ-ում գործող սոցիալական մի շարք խնդիրներ:

1. Ազգային բանկի ներդրում

Բանկերի քանակը անհապաղ պետք է նվազեցնել և առաջնահերթությունը տալ ազգային բանկի ստեղծմանը, քանի որ ՀՀ-ում օտարերկրյա կապիտալով բանկերի գործունեությունը պրակտիկայում ցույց է տալիս մեծ վտանգ՝ ՀՀ քաղաքացիների ֆինանսական միջոցների վրա: Այժմ և նախկինում, հատկապես օտարերկրյա կապիտալով գործող բանկերը տրամադրել են վարկեր՝ չափազանց մեծ տոկոսադրույքներով և կոռուպցիոն մեծ գործընթացներով՝ պատճառելով մեծ վնասներ ՀՀ քաղաքացիներին,

Այս գործընթացը շատերի սննկացման պատճառ է հանդիսացել: Մեծամասնությունը պարտքերի, տույժ տուգանքների մեջ հայտնվելով՝ զրկվել են իրենց ունեցվածքից, շատ հաճախ նաև միակ տանիք հանդիսացող անշարժ գույքից:

Ազգային բանկերում կարելի է ստեղծել, սփյուռքի մեր հայրենակիցների ֆինանսական միջոցների ավանդային պորտֆելներ՝ ցածր տոկոսներով, արդյունքում ապահովելով իրականում մրցունակ բանկային ծառայություններ և ցածր տոկոսադրույքներով տրամադրվող վարկեր:

1. Վարկավորման մեխանիզմների բարելավում

Այսօր բոլորիս հայտնի վարկավորման միակ տարբերկը գրանցված եկամուտների հիման վրա վարկավորումն է, սակայն վաղուց նոր մեթոդների ներդրման ժամանակն է: Խոսքը վերաբերվում է բալային համակարգի ներդրմանը, այսինքն վարկավորման հիմք պետք է հանդիսանա ոչ թե վարկառուի եկամուտները, այլ վարկային պատմության հիման վրա վաստակած բալերը: Այս մեթոդը կիրառվում է մի շարք զարգացած պետություններում՝ ԱՄՆ, Ռուսաստան և Եվրոպական

երկրներ: Սույն մեթոդի կիրառումը նաև խթան կհանդիսանա ՀՀ-ում հիփոթեքային վարկերի պորտֆելի աճի համար, ինչն էլ կլուծի բնակարանների ձեռք բերման խնդիրը:

1. Մասնավոր բանկերի գերշահույթի հետապնդման կասեցում ՀՀ Ֆինանսական շուկայում գործում են մասնավոր բանկեր և վարկային կազմակերպություններ, որոնց աշխատանքների վերահսկողությունը չափազանց կարևոր է: Բանկային ոլորտի վերահսկիչ կառույցների կոռումպացված և ոչ լիարժեք աշխատանքի արդյունքում, բանկերն ու վարկային կազմակերպություններն հետապնդում են գերշահույթներ, սակայն առաջարկվում է վերոնշյալ բարփոխումներին զուգընթաց, ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի և խորհրդի անդամների նշանակումն իրականացնել խստագույնս՝ առաջնորդվելով երկրի և ՀՀ քաղաքացիների շահերից:

Հաշվի առնելով ոլորտի կոռումպացվածությունը՝ տարիներ շարունակ ՀՀ ղեկավարությունը վարել է անտարբեր և եսասիրական քաղաքականություն երկրում գործող ֆինանսական կազմակերպությունների գործունեության նկատմամբ, սակայն այսօր օրհասական խնդիր է՝ երկրում առկա ֆինանսական կազմակերպությունների գործունեության վերահսկումը պետական մակարդակով:

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐ

Հայաստանի Հանրապետությունը անկախ ինքնիշխան պետություն է: Պատմականորեն ստեղծվել է իրավիճակ, որ հայ ազգի 60-70% մշտապես բնակվում է արտերկրում, հանդիսանում այլ երկրների քաղաքացի: Նրանց մի սովոր մաս Հայաստանի Հանրապետությունը համարում է իր պատմական հայրենիքը, երկրորդ հայրենիք, կամ, ուղղակի հայրենիքը:

Սույն առանձնահատկությունը թելադրում է ՀՀ արտաքին քաղաքականության ուրույն դրսևորումը:

1. Մենք, իշխանության գալով կվարենք Հայաստանի և Սփյուռքի ներուժների ամբողջական միավորման կուրս՝ որպես գերակայություն ընդունելով ՀՀ պետական շահը:

ՀՀ-ն Եվրասիական տնտեսական միության անդամ երկիր է, ՀԱՊԿ

անդամ, ԱՊՀ հիմնադիր անդամ:

2. Մենք կշարունակենք խորացնել հարաբերությունները դաշնակիցների հետ: Առանձնահատուկ գործընկեր-բարեկամական հարաբերությունների խորացումը ՌԴ-ի հետ կլինի մեր արտաքին հարաբերությունների կարևոր բաղկացուցիչը:

3. Որպես Եվրոխորհրդի անդամ և Եվրոմիության հետ համապարփակ և ընդլայնված գործընկերության մասին համաձայնագիր ստորագրած երկիր (18.04.2018) մենք մեկ տարվա ընթացքում կհասնենք Եվրոմիության երկրների հետ մեր քաղաքացիների համար առանց մուտքի վիզայի ռեժիմի հաստատմանը:

4. Խիստ կարևորում ենք Չինաստանի Ժողովրդական և Հնդկաստանի Հանրապետությունների հետ մեր հարաբերությունները իրական բարեկամական-ռազմավարական մակարդակի հասցնելը: Դրանց համար կան պատմական, տնտեսական, անվտանգային հիմնավորումները:

5. Առանձնահատուկ կարևորություն ենք համարում Իրանի Իսլամական Հանրապետության, Արաբական երկրների մեծ մասի, Հունաստանի, Կիպրոսի հետ հարաբերությունները գործընկերայինից բացարձակ բարեկամականի աստիճանի բարձրացումը:

6. Եվրոմիության երկրների հետ տնտեսական, ռազմավարական, քաղաքական հարաբերությունների խորացումը համարում ենք առաջնային խնդիր: Իրատեսորեն գնահատելով նրանց հետաքրքրությունը մեր տարածաշրջանի և ՀՀ հանդեպ, կհասնենք վստահելի և իրավահավասար գործընկերոջ կարգավիճակի՝ համադրելով մեր շահերը նրանց շահերին:

7. Կակտիվացնենք մեր գործունեությունը Լատինական Ամերիկայի երկրների հետ, ուղղորդելով մեր տարածաշրջանում նրանց հետաքրքրությունները: Կհասնենք նրանցից դաշնակցային հարաբերությունների:
8. Ունենք բոլոր պոտենցիալ հնարավորությունները ԱՄՆ հետ հիմնավոր գործընկեր երկիր դառնալու համար:
9. Կճանաչենք Քրդերի, Եզդիների մասսայական ոչնչացումն ու հայրենագրկումը, որպես ցեղասպանություն:
10. Միջազգային հարթակներում կներկայացնենք եզդիների և ասորիների ազգային շահերը, կպաշտպանենք նրանց դատը: